Ցանկանում ես սովորել ԱՄՆ-ում, բայց չգիտես որտեղի՞ց սկսել:
Մասնակցի՛ր «EducationUSA Կրթական Ցուցահանդես»-ին
25-ը հոկտեմբերի, 2018թ.
16:00-18:30
«Արմենիա Մարիոթ» հյուրանոց, Երևան
Տիգրան Մեծ սրահ
Մուտքը՝ գրանցումը հաստատող տոմսով (մանրամասները ստորև):

Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների **EducationUSA** հայաստանյան գրասենյակը սույն թվականի **հոկտեմբերի 25-ին** հրավիրում է մասնակցելու **EducationUSA ամենամյա կրթական ցուցահանդեսին:**
EducationUSA կրթական ցուցահանդեսը հիանալի հնարավորություն է հանդիպելու **ԱՄՆ տարբեր համալսարանների ներկայացուցիչներին՝** Ձեզ հուզող հարցերն ուղղելու համար: Շատերի համար, ովքեր չեն կարող այցելել այն համալսարանները, որոնցով հետաքրքված են, սա լավագույն տարբերակն է առաջնային տեղեկատվություն ձեռք բերելու կոնկրետ համալսարանի մասին անմիջապես համալսարանի պաշտոնական ներկայացուցչից: Միջոցառումը բաց է աշակերտների, ուսանողների, ծնողների, կրթական խորհրդատուների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են ձեռք բերել տեղեկատվություն ԱՄՆ բարձրագույն կրթության վերաբերյալ:
Հոկտեմբերի 25-ին EducationUSA կրթական ցուցահանդեսի շրջանակներում Հայաստան են ժամանելու **ԱՄՆ հետևյալ համալսարանների պաշտոնական ներկայացուցիչները՝**

American University of Armenia
California State University, Long Beach
Minerva Schools at KGI
Northeast Wisconsin Technical College
South Seattle College
Valdosta State University
Wright State University

EducationUSA կրթական ցուցահանդեսին մասնակցելու համար առցանց գրանցումը պարտադիր է: Խնդրում ենք գրանցվել՝ լրացնելով սույն հարցաշարը՝ **https://edusafairyerevan2018.eventbrite.com:**